տաւորին, Քաղաքապետին և այլոց՝ որոնցեալ էր 'ի կողմն Ցունաց եւ յագեալ։ Պատրաստեցաւ 'ի չու եւ Ոստիկան Կուսակալին՝ յառաջ բերեալ զմիջնորդութիւն իւր առ Բդեշխն վասն Հայոց, չպատրիլ 'ի բանից Ցունաց. զարտուղի գրել 'ի Դուռն, եւ զպարտաւորիլն առաջի Արքայի։ Հայք եւոն զվարձ ծառայութեան Խօճաքեանին յորդորմամբ Մուվէլլային. զկնի բազում վիճմանց և խռովութեանց հոգալով և զայլ կարեւոր պէտս նորին, որդւոյն և ծառայիցն։ Էառ նաեւ Ոստիկանն. հոգացին զծառայութիւն Ճարտարապետին, գիտութեամբ Նուրի Էֆէնտեայ. զի արդարութեամբ կատարեաց զգործ իւր 'ի չափելն և 'ի քննելն։ Իսկ Նուրի Էֆէնտի կարգաւորեաց զտումար քննութեան և որոշեաց զծախսն Հայոց վասն չինութեան տեղեաց նոցին, որ է 34,516 դահեկան 20 փարայ և 6 ստակ. իսկ բովանդակ ծախուց գումարն է 4,141,986 դահեկան։ Գրեաց Իլամ առ Տէրութիւնն վասն կատարեալ և անկատար գործոց, և յետ կնքելոյ զնոսա, ետ կնքել նաեւ Դատաւորին, և պատրաստեաց զայլ գրեանս առ այլ և այլ անձինս, յորս յայտնի ցուցանէր զհաւատարմութիւն Ճարտարապետին. իսկ զտարաժամ վերադարձ Խօճաքեանին՝ ինքեան հարցանել ասէր. զայսոսիկ գրեանս յանձն արար Նուրի՝ Ճարտարապետին, զորմէ Հայք եւս գոհութեամբ գրեցին։ Արդ՝ սոքա ամենեքեան անձինք իբրեւ 38 մեկնեցան յԵրուսաղէմէ 'ի Դամասկոս ('ի 10 Ցուլիսի)։

Իսկ Նուրի Էֆէնտի մնացեալ միայն յԵրուսաղէմ՝ սկսաւ գրել առ Զէքի Էֆէնտի բարերար իւր զամենայն հանդամանս գործոյն 'ի սկզբանէ մինչեւ ցօր մեկնելոյ նոցա յԵրուսաղէմ, զհակառակութիւն Դատաւորին, զխարդախութիւն Խօճաքեանին, զպակաս և 'ի Ցունաց զդողացեալ տեղիս Հայոց 'ի Ս. Ցարութեան, այլովքն հանդերձ, և անհնարին 'ի գլուխ ելանել գործոյն առանց հրովարտակի, որոյ վասն իսկ սպասէր. գրեցին նաեւ Պատրիարքն և միաբանք առ գլխաւորս ազգին պարագայիւք ('ի 21 Ցուլիսի)։ Երանի թէ յայսմ ամի եւս մնացեալ էր Արքունի հրովարտակն ասէին՝ զի անկեալ էին 'ի ներքոյ բազմագումար պարտուց. զայսոսիկ գրեանս յանձն արարին Ադամ Գալֆային և միաբան Սարգսին, ընդ որս էր եւ բարեպաշտուհի Խաթուն